

պէշիստան, վասնզի, ըստ Թիւթիւնճիի վկայութեան, հապէշ վեց ճորտական իշխանութեանց, ինչպէս Սէննարի Թագաւորութեան մէջ կոյրեր, կաղեր, խոցոտներ և այլ այս տեսակ հաշմանդամներ գոյութիւն չունին (134-135)։

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ. — Յովհ. Թիւթիւնճի որոշ տեղեկութիւն մը չէ տուած, թէ ինչ ձեւով ճամբորդած է։ Երբ գետով կը կատարէ իր ճամբորդութիւնը, որոշ է որ Նեղոսի վրայ նաւարկող նաւերէն կ'օգտուի, բայց ցամաքին վրայ ինչպէս ճամբորդած է, կառքով թէ ձիով կամ ուղտով, բնաւ յիշատակութիւն չ'ըներ այդ մասին։ Միայն անգամ մը կը յիշէ, թէ Սէննար մնացած է մինչև կարաւանի մը կազմութիւնը (192-193)։ Իսկ Կարմիր ծովու վրայ խօսքը կ'ընէ նաւակի և ոչ նաւու (11-12), ինչ որ ուշագրաւ է։ Հետեւաբար այս մասին լուսաբանութիւն մը ստանալ կարելի չէ իր գործէն։

ԲՆԱԿՉՈՒԹԻՒՆ. — Յովհաննէս Թիւթիւնճի Հապէշիստանի բնակչութեան մասին կու տայ կարգ մը տեղեկութիւններ, որոնց համաձայն չեն ուրիշ ուղեգիրներ։

Հապէշները ան կը բաժնէ երկու մասի, Թելմանոսք, որոնք իբր թէ հրէական ծագում ունէին, և Թաղէոսեանք, որոնք իբր թէ Հայերէն սերած էին (123-125)։

Արդարեւ՝ հապէշ ժողովուրդը զանազան ցեղերէ կը բաղկանայ, բայց միայն երկուք չեն անոնք, իսկ Հայերէ սերած ցեղի մը գոյութիւնը, թէև հաւանական չըլլայ, նորութիւն մըն է, զոր Յովհաննէս Թիւթիւնճի կ'աւանդէ, չենք գիտեր ինչ բանի վրայ հիմնուած։ Ագոնց արեւմտեան կալլայէն դուրս կը